



Լեռնիդ Ենգիբարյան

Գունդը ասի մեջ

Կրկեսում մարդիկ բարդ համարներ են անում: Նրանք ճախարում են գմբեթի տակ, տասնյակ իրերով աճաբարարություն են անում, հետո ձեռքերի վրա են կանգնում, ու դա, հաստատում են, հատկապես բարդ է ու դժվար է սովորելը: Եվ բարդ է ոչ միայն այն պատճառով, որ անվերջանալի մարզումներից հետո գիշերը կցավեն ձեր ուսերը, կայտուցվեն թեւերը, եւ աչքերն արյունով կլցվեն . . . Այս ամենն, իհարկե, ծանր է եւ, այնուամենայնիվ, այն վաղ թե ուշ մոռացվում է: Միայն մի բան երբեւէ չի մոռացվում՝ երբ կանգնում ես երկու ձեռքերի վրա, կամաց պոկում ես մի ձեռքդ եւ հասկանում՝ ասիդ մեջ երկրագունդն է: